

**ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆՊԱՏԱԿՆ Է  
«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ»**

*Ձեր ուշադրությանը ներկայացվող հոդվածը առաջին անգամ տպագրվել է Ռազմավարական մշակույթի հիմնադրամի կայքէջում ս.թ. մարտի 6-ին (Մոսկվա)*

Հայաստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների խոր վերլուծությունը դեռևս առջեւում է, բայց, այդուհանդերձ, մենք իրավունք ունենք արդեն այսօր որոշ եզրահանգումներ անելու: Կցանկանայինք նախ եւ առաջ անդրադառնալ Հայաստանի նախագահի նախկին թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի արած մի վերջնագրային հայտարարությանը: Այսպես, 2008թ. մարտի 5-ին Հայաստանի Սահմանադրական դատարանի նիստում նա պահանջեց կազմակերպել, ոչ ավել ոչ պակաս, «մարտի մեկի իրադարձությունների միջազգային հետաքննություն»:

Փորձենք հասկանալ, թե ի՞նչ կարող է նշանակել «մարտի մեկի իրադարձությունների միջազգային հետաքննությունը»: Մենք արդեն վարժվել ենք, որ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահը բավականին հեշտությամբ է գործածում տերմիններ ու հասկացություններ, որոնց իրավական բովանդակությունը չի պարզաբանվում: Մինչդեռ, որեւէ իրադարձության «միջազգային հետաքննություն» հասկացությունն ունի միանգամայն կոնկրետ բովանդակություն եւ իրագործման կանոնակարգված ընթացակարգեր:

Նախ՝ դա նշանակում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որն էլ արտոնում է այդօրինակ «միջազգային հետաքննությունները», պետք է ընդունի, որ տվյալ իրադարձությունը այս կամ այն պետության կողմից իր միջազգային պարտավորությունների խախտում է եւ այն անվտանգության սպառնալիք է ստեղծում տարածաշրջանում – աշխարհում:

Երկրորդ՝ ՄԱԿ-ի հովանու ներքո պետք է ստեղծվի միջազգային հատուկ քննչական մարմին՝ ինքնիշխան պետությունում աշխատանքի արտակարգ լիազորություններով օժտված մի հանձնաժողով:

Երրորդ՝ այդպիսի քննչական հանձնաժողովի գործունեությունը ենթադրում է, նախ եւ առաջ, անսահմանափակ լիազորությունների տրամադրում՝ «Մարտի 1-ի» գործի անխտիր բոլոր նյութերը մանրակրկիտ ուսումնասիրելու համար, ներառյալ Հայաստանի ցանկացած քաղաքացու, այդ թվում՝ պաշտոնյաների, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության եւ զինված ուժերի սպաների, ինչպես նաեւ պետության բարձրագույն ղեկավարների հարցաքննությունների ենթարկելը: Ընդ որում, վերջիններս ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունք չեն ունենա:

Չորրորդ՝ ինչպես ցույց է տալիս միջազգային հարուստ փորձը, բազմազգ քննչական խմբի մասնագետները (քննիչներ, դատախազներ, քրեագետներ, հատուկ ծառայությունների աշխատակիցներ, թարգմանիչներ եւ այլն), ի հեճուկս իրենց տրված մանդատի, ներկայացնում ու պաշտպանում են իրենց իսկ պետությունների շահերը, այսինքն՝ կատարում նրանց քաղաքական պատվերը: Առհասարակ, հենց դրա համար էլ ստեղծվում են այդօրինակ հանձնաժողովները: Ըստ այդմ էլ՝ դրանց աշխատանքը, որպես կանոն, ձգձգվում է այնքան ժամանակ, որքան պահանջվում է քաղաքական պատվերը մինչեւ վերջ կատարելու համար: Հիշենք, թե ինչպես էր 1991-ից մինչեւ 1998 թվականը ՅՈՒՆՍԿՕՄ-ը («Միավորված Ազգերի կազմակերպության հատուկ հանձնաժողովը») զբաղված, մասնավորապես, Իրաքում գոյություն չունեցող միջուկային զենքի շարունակական որոնումներով, ու թե ինչպես նրա աշխատանքի ողջ ընթացքն օգտագործվեց Իրաքի դեմ ամեն տեսակի ճնշումների, նրա անկախությունը սահմանափակող ու պետական մեքենան խափանող նորանոր պատժամիջոցների սահմանման ու պահպանման համար:

Իհարկե, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահն, առաջարկելով կազմակերպել «մարտի մեկի իրադարձությունների միջազգային հետաքննություն», կարող է եւ չիմանալ այդ տարրական ճշմարտությունները, որոնք միջազգային իրավագետների եւ ազգային անվտանգության գծով մասնագետների ուսումնասիրության առարկան են: Բայց այդ դեպքում մենք իրավունք ունենք եզրակացնելու, որ Լ. Տեր-Պետրոսյանն անտեղյակ եւ անգետ է այն հարցերում, որոնց մասին ինքն իրեն թույլ է տալիս հրապարակայնորեն արտահայտվելու: Իսկ եթե նա գիտի, թե ինչի մասին է խոսքը, եւ, այդուամենայնիվ, շարունակում է պնդել իր առաջարկը, ապա հիմնավորված կասկածներ են առաջանում անկախ Հայաստանի բուն գաղափարին նրա նվիրվածության վերաբերյալ: Առանձնակի մտավոր ջանքեր չեն պահանջվում՝ պատկերացնելու համար մեր արտահայտած դատողություններին Լ. Տեր-Պետրոսյանի ու իր կողմակիցների արձագանքը. «Իշխանությունները վախենում են միջազգային հետաքննությունից, ինչն ապացուցում է ընդդիմության իրավափոփությունը» եւ այլն: Բայց եկեք առանց հիստերիայի գնենք ՀՀ նախկին նախագահի առաջարկի իրականացման հնարավոր հետեւանքներն ու ելությունը:

Գաղտնիք չէ, որ միջազգային կազմակերպություններում, որոնց հովանու ներքո ստեղծվում են միջազգային քննչական հանձնաժողովները, առաջին շուրթակը նվագում են ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցները: Եթե մի պահ պայմանականորեն պատկերացնենք, թե նմանօրինակ քննչական մարմին է ստեղծվել Հայաստանի սույն թվականի մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ, ապա դժվար չէ կռահել, որ միջազգային քննչական խմբում կգերակշռեն հենց արեւմտյան երկրների ներկայացուցիչները, որոնք իրենց յուրահատուկ աշխարհաքաղաքական շահերն ու խնդիրներն ունեն տարածաշրջանում: Քննչական խմբի անդամներն օժտված կլինեն իրավաբանական անձեռնմխելիությամբ Հայաստանի ողջ տարածքում՝ համաձայն Արտոնությունների եւ իմունիտետների (անձեռնմխելիության) մասին Միացյալ Ազգերի կոնվենցիայի: Միեւնույն ժամանակ նրանք ակտիվորեն կգբաղվեն լրտեսական գործունեությամբ, ինչպես դա արել են, օրինակ, հենց ՅՈՒՆՍԿՕՍ-ի ղեկավարներն ու անդամները եւ հետագայում նույնիսկ հրապարակայնորեն հայտարարել այդ մասին: Այսպես, Washington Post – Boston Globe թերթերը, անանուն աղբյուրներ հիշատակելով, հայտնել են, որ ՅՈՒՆՍԿՕՍ-ի ղեկավար Ռիչարդ Բաթլերը համագործակցում էր ամերիկյան ԿՀԿ-ի հետ, մասնավորապես, նպատակ ունենալով Ելեկտրոնային լրտեսություն հաստատել Իրաքի ռազմական հաղորդուղիների վրա: Այդ տեղեկությունը հաստատեց ՅՈՒՆՍԿՕՍ-ի նախկին անդամ Ռոդ Բարթոնը՝ 2005 թ. փետրվարին ավստրալիական հեռուստատեսությունով ելույթ ունենալիս: Հավաքված տեղեկատվությունը օգտագործվեց Իրաքի դեմ ռմբահարումների գերճշգրիտ ուղղորդման համար:

Որպեսզի ավելի լիարժեք պատկերացնենք, թե ինչ լիազորություններ են ընձեռնվում նմանօրինակ քննչական խմբերին, մի քանի պարբերություն մեջբերենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1595 բանաձեւից, որով հիմնադրվեց «ՄԱԿ-ի միջազգային անկախ քննչական հանձնաժողովը»՝ 2005թ. Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության հետաքննության գործում «լիբանանյան իշխանություններին օժանդակություն ցուցաբերելու» նպատակով:

*ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշում է, որ սեփական պարտականությունների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հանձնաժողովը պետք է.*

*-լիակատար օժանդակություն ստանա լիբանանյան իշխանությունների կողմից, ներառյալ լիակատար հնարավորություն՝ օգտվելու նրանց ունեցած բոլոր այն փաստաթղթերից, վկայություններից ու ֆիզիկական տվյալներից – ապացույցներից, որոնք Հանձնաժողովը կհամարի հետաքննությանն առնչվող.*

*-լիազորություններ ունենա՝ հավաքելու այդ ահաբեկչական գործողության հետ կապված ցանկացած լրացուցիչ տվյալներ ու ապացույցներ, ինչպես*

*փաստաթղթային, այնպես էլ ֆիզիկական, ինչպես նաև հարցաքննություններ անցկացնելու Լիբանանի բոլոր այն պաշտոնատար եւ այլ անձանց հետ, որոնց Յանձնաժողովը կհամարի հետաքննությանն առնչվող.*

*-օգտվի Լիբանանի ողջ տարածքում տեղաշարժվելու ազատությունից, ներառյալ ազատ ելումուտը բոլոր այն վայրեր ու օբյեկտներ, որոնք Յանձնաժողովը կհամարի հետաքննությանն առնչվող,*

*-ստանա ծառայություններ, որոնք անհրաժեշտ են իր գործառույթների կատարման համար, ինչպես նաև ապահովվի ոչ միայն տարածքներով, անձնակազմով ու գույքով, այլև արտոնություններով եւ իմունիտետներով, որոնց իրավունքը նա ունի, համաձայն **Արտոնությունների եւ իմունիտետների մասին Միացյալ Ազգերի կոնվենցիայի**:*

2006թ. փետրվարին արդեն որոշում ընդունվեց Լիբանանի հարցերով Յատուկ տրիբունալի ստեղծման մասին, իսկ 2007թ. դեկտեմբերին Յազան համաձայնվեց դառնալ Ռ. Յարիրիի սպանության գործով դատավարության անցկացան վայրը:

Իսկ այժմ՝ Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկի ենթադրյալ իրականացման հետեւանքների մասին:

Այդպիսի մարմնի ստեղծման բուն գործընթացը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օրակարգ տվյալ առաջարկը մտցնելը, այդ միջազգային ատյանում Յայաստանի ներքին խնդրի քննարկումն ու բարձրաձայնումը, մանդատի վերաբերյալ վեճերը եւ այլն, արդեն իսկ սաստիկ հարված կլինի Յայաստանի Յանրապետության ինքնիշխանությանն ու հեղինակությանը:

Յայաստանում այդօրինակ խմբի աշխատանքի ընթացքն, իր հերթին, կործանիչ ազդեցություն կունենա Յայաստանի ազգային անվտանգության ողջ համակարգի համար, որը, ինչպես ցույց տվեցին վերջին իրադարձությունները, լուրջ թերություններ ունի եւ դեռեւս ձեւավորման փուլում է: Փաստորեն, նախկին նախագահն առաջարկում է հանձնել Յայաստանի ինքնիշխանության կարելորագույն մասը՝ նրա արդարադատության համակարգը, միջազգային այն ուժերի վերահսկողությանը, որոնք բացարձակապես շահագրգռված չեն հայկական պետության ամրապնդման գործում: Եթե հաշվի առնենք նաև հայադրբեջանական հակամարտության գործոնը, որը ցանկացած պահի կարող է փոխարկվել Յայաստանի դեմ նոր ագրեսիայի, ապա միջազգային այդօրինակ հանձնաժողովի ստեղծումով հայկական անկախ պետականությունը, ինչպես ասում են, կերգի կարապի իր երգը: Ըստ երեւոյթին, զուր չէր Լ. Տեր-Պետրոսյանը 2008թ. փետրվարի 22-ի իր միտինգում ներշնչում ունկնդիրներին, թե «ազատությունն այնպիսի արժեք է, որը վեր է անգամ անկախությունից, անգամ բոլոր հաղթանակներից, անգամ պետականությունից: Ո՛ւմ է պետք այն պետությունը, այն իշխանությունը, այն անկախությունը, այն հաղթանակը, որը մարդուն չի տալիս ազատություն»:

Յամադրելով Լ. Տեր-Պետրոսյանի այս անարխիստական հայեցակարգն Յայաստանի ազատագրված տարածքը Ադրբեջանին հանձնելու եւ այնտեղ միջազգային «խաղաղարարներ» մտցնելու նրա սելեռուն գաղափարի, Արեւմուտքին ուղղված՝ Յայաստանի ներքին գործերին անպատկառորեն միջամտելու նրա շարունակվող կոչերի, ինչպես նաև «մարտի մեկի իրադարձությունների միջազգային հետաքննության» վերաբերյալ նրա վերջին առաջարկի հետ, կարելի է ամենայն վստահությամբ եզրակացնել. Լ. Տեր-Պետրոսյանն Յայաստանում ներկայացնում է լոբբինգավորում է համաշխարհային քաղաքականության որոշակի հեղինակների շահերը, որոնք ընդհանուր ոչինչ չունեն հայկական պետականության եւ հայ ժողովրդի շահերի հետ: Ըստ եր-ույթին, Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական եւ հետընտրական ողջ ծրագրի մեխը մարտի 5-ին նրա հնչեցրած «իրադարձությունների միջազգային հետաքննությունն» էր Յայաստանում, ինչի համար էլ հենց հրահրվեցին սույն թվականի մարտի 1-ի անկարգությունները:

Այդ վիրտուալ, բայց միանգամայն ճանաչելի հեղինակների ծրագրերի իրականացումը մենք հստակ տեսնում ենք Իրաքում, որտեղ, բազմաթիվ վերլուծաբանների կարծիքով, պետականության կորուստն ու երկրի փլուզումը լոկ ժամանակի հարց է: Պետք է նաեւ ընդունել, որ Իրաքում տեղի ունեցած իրադարձությունները նախորոշվեցին հենց վերոհիշյալ ՅՈՒՆՍԿՕՄ հանձնաժողովի աշխատանքով: Բայց, եթե Սադամ Յուսեյնի ռեժիմն իսկապես հանցավոր էր եւ արժանի միջազգային հանրության դատապարտմանը, ապա մեր դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ առաջին նախագահի հավակնություններին եւ վնասարար գործունեությանը, որն անձամբ փորձում է նույնպիսի կործանիչ հարվածի տակ դնել վերստեղծված հայկական պետականությունը, որն իր քսան տարուց էլ պակաս կենսաժամանակահատվածում անցավ գոյության համար մղված պատերազմի ու տնտեսական շրջափակման միջով, որն աժմ էլ ենթակա է տեղեկատվական ու հոգեբանական հզորագույն գրոհների եւ թուրք-ադրբեջանական նոր ներխուժման սպառնալիքի: Հետաքրքիր է նաեւ ընդգծել, որ իր նախագահության շրջանում Լ. Տեր-Պետրոսյանն երբեք «միջազգային հետաքննության» հարց չի բարձրացրել, օրինակ, Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Գետաշենում, Մարաղայում եւ հայաբնակ այլ վայրերում ադրբեջանական իշխանությունների կազմակերպած հայկական ջարդերի ու կոտորածի առնչությամբ:

Վերը նկարագրվածը՝ «մարտի մեկի իրադարձությունների միջազգային հետաքննության» Լ. Տեր-Պետրոսյանի պահանջի ընդամենը մի քանի հնարավոր հետեւանքներն են, որոնք, հուսով ենք, երբեք չեն իրականանա Հայաստանի պարագայում. հայ ժողովուրդը նման բան թույլ չի տա:

Միեւնույն ժամանակ Հայաստանի իշխանությունները պետք է ընդունեն, որ բազմաթիվ այլ սխալների հետ մեկտեղ (սոցիալական եւ կադրային քաղաքականության, հասարակայնության ձայնը լսելու անկարողության եւ այլ հարցերում), թույլ տվեցին նաեւ ռազմավարական սխալ. այն է՝ իրենց թողտվությամբ (իսկ երբեմն էլ՝ հովանավորությամբ) Հայաստանում, դրսից ցուցաբերվող աջակցության շնորհիվ, արմատներ գցեց ու ինքնակազմակերպվեց հզոր հինգերորդ գորասյուն՝ Լ. Տեր-Պետրոսյանի եւ ՀՀԾ-ի գլխավորությամբ: Բուժել այդ հիվանդությունն առանց ցավի, ավա՛ղ, արդեն անհնար է, պահը կորսված է: Բայց «հիվանդ ատամի» հեռացնելն, ամեն դեպքում, պարտադիր է:

**ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ**

**Քաղաքական գիտությունների դոկտոր,**

**Ռազմավարական հետազոտությունների «Արարատ» կենտրոնի տնօրեն**

[www.hayq.org](http://www.hayq.org)

[www.ararat-center.org](http://www.ararat-center.org)